



Պարույր Սևակ

Խաղալիք սարքողը

Ես կարող էի ամեն տեղ լինել
Եվ ամեն տեղ էլ ես կարող էի ճշալ.
«Չե՛մ ուզում» և կամ «Ուզում եմ»:
Բայց ես ամեն տեղ չեմ եղել բնավ
Ու չեմ էլ լինում,
Իսկ ուր լինում եմ՝
Ես ինձ մտքիս մեջ ասում եմ. «Չասե՛ս»:
Ես ինձ մտքիս մեջ ասում եմ. «Չասե՛ս»
Եվ իմ շասածը թողնում ամենքին,
Որ նրանք հետո տնտղե՛ն-շոշափե՛ն:
Ու երբ հասկանան,
Թե ինչ են իրենք տնտղել-շոշափել՝
Այլևս չասել չեմ կարողանա
Ու կասեմ.
-Գիտե՞ք,
Վճռել եմ դառնալ խաղալիք սարքող
Եվ, հավատացե՞ք, իրո՞ք կդառնամ:
...Աշնան պաղ քամուց ծառերն են շարժվում,
Ինչպես որ մարդու գլխում շարժվում է
Միտքը ճյուղավոր,
Եվ ցերեկային ամպած երկնքից

Ներքս են թափվում
Աստղերի պաղ-պաղ կաղապարները,
Որ ավելի կարճ կոչվում են «տերև»:
Ես խաղալիքներ կձուլեմ այդ պաղ կաղապարներով:
Եվ ով ինձ հարցնի. «Ի՞նչ արժի», ես ինձ
Լուն կասեմ. «Չասե՞ս»,
Իսկ ի պատասխան հարցնողի հարցի
Ես կասեմ. «Ողջո՞յն»:
Չգիտեմ, թե նա իմ մասին արդյոք ի՞նչ կմտածի,
Իսկ նույն այդ պահին չեմ կարողանա ես շմտածել,
Որ կար մի աղջիկ...
Եթե ես ասեմ, որ մոռացել եմ անունը նրա,
Ինձ հավատացեք այնքան, որքան որ
Յուրաքանչյուրդ է հաստատ հավատում
Աշխարհի տարբեր լրագրուերին:
Եվ ամեն անզամ, երբ ես ուզում եմ
Աշխարհին հայտնել անունը նրա,
Ինքըս ինձ դարձյալ ասում եմ. «Չասե՞ս»:
Իսկ այդ աղջիկը, գիտե՞ք, ասում էր.
«Երբ Բեթհովեն եմ լսում՝ թվում է,
Թե ես քայլում եմ ծովի վրայով»...
Ես ունեմ նաև ճիշտ կաղապարը և այդ աղջրկա,
Տա՞ք կաղապարը:
Ու խաղալիքներ ես պիտի ձուլեմ ա'յդ կաղապարով,
Տա՞ք կաղապարով:
Եվ ով ինձ հարցնի. «Ի՞նչ արժի», ես ինձ
Լուն կասեմ. «Ասա՞»:
«Դատա՞րկ քան,- կասեմ,-
Ընդամենա արժի մի... անցած մի կյա՞նք»...
Այսպես՝ կարող եմ ամեն քան սարբել.

Այդ իմաստների մասին են ասում,
Թե մարդու տղան ոսկի ձեռքը ունի:
Եվ ամեն անգամ,
Երբ ես նայում եմ իմ այս ձեռքերին,
Իմ ձեռքերը միշտ ինձ ասում են. «Հը»,
Որ հա 'րց չէ բնավ,
Այլ պատասխան է իմ լոին հարցին:
Իսկ ամեն անգամ
Ես ել ձեռքերիս նայում եմ այսպես,
Ինչպես նոր պեղած իրին է նայում հնաբանն անփորձ,
Եվ ասում եմ. «Հա՛»,
Որ պատասխա՞ն չէ, այլ հարց է շրջված:
Եվ իմ ձեռքերը գլուխ թափ տալիս,
Իսկ իմ գլուխը ձեռքով է անում,
Ու... հասկանում եմ, որ ես չե՛մ կարող
(Եվ աշխարհումը ո՛չ ոք չի կարող)
Լոկ մի՛ քան սարքել՝
Ա՛յն միայն,
Ինչին ճշմարտություն են կոչել աշխարհում:
Լոկ ա՛յդ չի սարքվում,
Թեպետ և անվե՛րջ, դարե՛ր շարունակ
Զանում են սարքել
Անոնվ աստծո՛ւ,
Տիրակալների հրամաններո՛վ,
Պարանո՛վ,
Ով լոկ իր պնդությունն է որոշում
Մարդկանց պարանոցներին.
Չենքո՛վ,
Որ մարդկանց կրծքերի վրա
Ուսուցանում է կետադըրություն:

Սարքում են այսպես:

Դարե՛ր շարունակ:

Անդուլ սարքում ա՛յն, ինչ որ չի՛ սարքվում,

Ուրեմըն նաև չի՛ կարող քանդվել:

Սարքում են:

Իսկ ես ումի՞ց եմ պակաս:

Եվ... վճռվա՛ծ է.

Ե՛ս Էլ այսուհետ

Ճշմարտություն եմ սարքելու, և շա՛տ:

Ու պիտի ծախե՛մ,

Ծախեմ ամենո՞ւր՝

Ուր կամենում են, թե չեն կամենում.

Խաչմերուկներում

Ու խանութների դոների՛ առջև.

Մայթերի՛ վրա

Եվ արձանների պատվանդանների՛ն,

Թե՛ զրբերի մեջ,

Թե՛ ամբիոններից:

Ու երբ ինձ մարդիկ հարցնեն. «Ի՞նչ արժի»,

Կպատասխանեմ արդեն ո՛չ թե ես,

Այլ այն խաղալիք աղջիկը:

Եվ նա

Կասի ոչ այլ ինչ,

Քան հենց իր զինը.

«Դատա՛րկ քան,- կասի,-

Ընդամե՛նն արժի մի... անցած մի կյա՛նը»...

...Ու պիտի որ ես, ինքնե՛րդ Էլ զիտեք,

Շա՛տ հարստանամ իմ առևտրով:

Եվ այնքա՛ն պիտի ես հարստանամ,

Որ... համերգի տոմս առնեմ ու...

...զնամ Բեթհովեն լսեմ,
Եվ ինձ էլ քվա,
Թե ես քայլում եմ ծովի վրայով...
Իսկ թե այդ պահին
Գարու՞ն թե աշուն կլինի դրսում,
Մի՞թե նույնը չէ: Եվ ի՞նչ բանն է իմ:
Մի՞թե նույնը չէ և ի՞նչ բանն է իմ,
Թե քամուց պիտի ծառերը շարժվե՞ն,
Ինչպես որ մարդու
Գլխում շարժվում է միտքը ճյուղավոր,
Եվ ցերեկային ամպա՞ծ թե չամպած
Երկնքից պիտի թափվե՞ն-շթափվեն
Գունեղ աստղերի պաղ կաղապարներ,
Որ ավելի կարճ կոչվում են «տերև»...
Ու տուն գնալիս
Եթե ինձ հանկարծ մեկն ասի. «Բա՛րե»,
Ես ի պատասխան կասեմ. «Ի՞նչ արժի»:
Թե պատասխանիս վրա ծիծաղեն ինչ-որ աղջիկներ,
Որոնց անունը չգիտեմ իրոք,
Իբրև պատասխան ես կասեմ.
«Չունե՞մ ձեր կաղապարը»:
Եվ կխոնրվեն նրանք իմ շուրջը.
Մարդիկ սիրում են միշտ խոսեցնել նրանց,
Ում իրենք խելառ են հաշվում:
Եվ կկամենան իմանալ իմ ո՞վ կամ ի՞նչ լինելը:
Զեռները նորի՛ց ինձ կասեն. «Չասե՞ս»:
Ես ի՞նքս Էլ, ի՞նքս Էլ ինձ կասեմ. «Չասե՞ս»:
Սակայն խաղալիք սարքող վարպետը
Ի՞ն իսկ բերանից,
Ի՞ն իսկ բերանով

Արդեն կբոռա՛ ու կկրկընի՛
Հնավաճառի ելսէջումով.
«Ճշմարտությո՛ւն եմ ծախում, սարքովի՛»...

24.X.1962թ.

Երևան